№ 159 Հոկտեմբերի 23 Կիրակի 1883 Հոկտեմբերի 23 Կիրակի № 159

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գէորգ Բաշինջաղեանի նկարները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 19 հոկտեմբերի

Կիրակի, հոկտեմբերի 16-ին, կատարվեցաւ Կուկիոյ Ս. Աստուածածնայ եկեղեցու «Շուշանիկեան-Թանդոյեան» ուսումնարանի գոյութեան 20 ամեայ տարեդարձը և ուսումնարանական նոր շէնքի օրհնութիւնը։ Սուրբ պատարագից յետոյ, ժամի 12-ին, փոքրաթիւ հասարակութիւնը հաւաքվեց ուսումնարանի դահլիճը և տեղիս առաջնորդի ներկայութեամբ բացվեց հանդէսը աշակերտուհիների երգով։ Ուսումնարանի հոգաբարձու ուսուցիչ արժ. տէր-Ներսէս Ղամազեանի ճառից երևաց, որ ուսումնարանը հիմնել է 1863 թ. արժանայիշատակ Իսահակ Մարտիրոսեան Թանդոյեանցը, չունելով առաջին անգամից 3 սենեակ, որտեղ սովորելիս են եղել 30-ի չափ մանուկներ և որի ծախքը տարեկան 300 ր. տալիս է եղել ինքը հիմնադիրը։

Այնուհետև 1868 թ. հանգուցեալ Թանդոյեանը շինել է սուրբ Աստուածածնայ եկեղեցին և ուսումնարանապատկան 5 կրպակ, իսկ 1869 թ. նա ապելացրել է ուսումնարանի շէնքին դարձեալ 3 սենեակ և այդ թուականին բացվել է մի առանձին դասարան օրիորդաց կրթութեան համար։ Այդ երկսեռ ուսումնարանը կառավարվելիս է եղել ուսումնարանապատկան կրպակների տարեկան 700 ռուբլ եկամուտով։ Հանգուցեալ Թանդոյեանը 1875 թ. եկեղեցական գաւթում դարձեալ կառուցել է մի երկյարկանի տուն, բայց չաւարտած՝ վախճանվել է այդ թուին, իսկ շինութիւնը աւարտել է նրա կինը։ Ուսումնարանի վարչութիւնը 1879 թ. Կուկիոյ «Միրզոյեան» տղայոց դպրոցի բացմամբ փակում է ուսումնարանի տղայոց բաժինը և փոխարկում է նրան օրիորդաց ուսումնարանի։ 1883 թ. ուսումնարանը բացում է մանկական պարտէզ օր. Մամիկոնեանի ղեկավարութեամբ և ուսումնարանը կազմած է լինում մանկական պարտէզից և 2 պատրաստական դասարաններից։ Այդ թուականին հիմնադրի ամուսին տիկ. Կէկէլ Թանդոյեանը ուսումնարանի շէնքը մեծացնում է, աւելացնելով երկրորդ յարկ՝ ընդամենը 10 սենեակից բաղկացած, որ ուսումնարանի վարչութիւնը, տեղիս առաջնորդի համաձայնութեամբ առաջիկայ ուսումնական տարուց մտադիր է վերածել միջնակարգի։ Այնուհետև տէր-հայրը ներկայացրեց ներկայ ուս. տարուայ տնտեսական և ուսումնական հաշիւը, որից երևաց, որ ուսումնարանը ունեցել է 80 աշակերտուհի, 36-ը՝ մանկական պարտիզում, մնացածները 1 և 2 պատր. դասարաններում։ Այդ աշակերտուհիներից 30-ը թոշակառու են եղել տարեկան 24 ր. վճարով, մնացածները՝ ձրի։ Ուսումնարանի մուտքը եղել է ընդամենը 3490 ր. այդ հաշուից 2700 ր. անշարժ կալուածներից, 700-ը՝ թոշակներից, 70-ը մասնաւորամանդուցեալ Էֆենդեանի Թիֆլիսի ծխական դպրոցներին կտակած 500 ռուբլ գումարից, 10-ը ունէր պ. Խատամանեանից, և 10-ը տիկ. Աննա Էմինեանից։ Իսկ ծախքը եղել է ընդամենը 3000 ր. այդ հաշուից 2100 ուսուցիչներին, 100 ր. աղախնին, 100 փայտի և ջրի, 700 ր. կարասիքի, դասական պիտոյքների և շինութեան նորոգութեան։ Ծախքը մուտքից դուրս գալով ուսումնարանի դրամարկղում մնացել է զուտ գումար 490 ր.։ Ուսումնարանը ունեցել է հոգաբարձութիւն, 2 ուսուցիչ և 4 վարժուհի։ Սորանից յետոյ կարդաց մի ճառ ուսումնարանի հոգաբարձու բժիշկ Մարգարեանը։ Ճառը խրթին էր և անմատչելի հասարակ մահկանացուներին։ Ճառախօսը աշխատում էր կարծես ցոյց տալ կրթութեան նշանակութիւնը, բայց բոլոր դարձուածքները մնացին տարաբաղդաբար աղամական մթութեան մէջ։ Ճառի վերջում պ. բժիշկը յայտնում էր դժգոհութիւն (պրետենզիա), որ հոգևոր իշխանութիւնը մինչև այսօր չէ վարձատրել արժ. տէր-Ներսէս Ղամազեանին, որը բաւականին աշխատել է իր յորդորներով ուսումնարանի ներկայ շինութեան գլուխ գալուն։ Այնուհետև տեղիս առաջնորդը օրհնելով հանգուցեալ Իս. Թանդոյեանի յիշատակը և մաղթելով երկար կեանք նրա ամուսին տիկ. Թանդոյեանին, որը ներկայ էր այդ հանդիսին, յայտնեց իր ուրախութիւնը, որ ինքը առիթ ունի ներկայ գտնվելու դպրոցական այդ տեսակ հանդիսին, մանաւանդ՝ որ այդ դպրոցը հիմնվել է այնպիսի տարում, երբ կրթութեան նախանձախնդիրների և համակրողների թիւը շատ սահմանափակ էր։ Պէտք է նկատել, որ ուսումնարանի նոր շէնքը խոշոր պակասութիւններ ունի առողջապահական տեսակէտից. 10 սենեակների մէջ չը կայ մի դահլիճ ռեկրէացիայի համար, մնացած սենեակներն էլ և թէ անցքերը շատ անյարմարութիւններ ունեն։ Առհասարակ մեր մէջ շինութիւններ շինելիս նշանակութիւն չեն տալիս առողջապահական պայմանների համապատասխանութեանը՝ իրանց համար հիմք ընդունելով այն, որ սովորող աշակերտները իրանց տներում աւելի հակառողջապահական պայմանների մէջ են....։ Մի ուրիշ տեղ միջնակարգ ուսումնարանի շինութեան վերաբերութեամբ առողջապահական պայմանների մասին դատողութիւններ անելիս, ներկայ եղող ծխականներից մէկը «առողջապահական պայմաններ» պահանջողին ուղղակի պատասխանեց, թէ՝ «առողջապահականը»—կօջօրն է, էստեղ ինչ առողջապահական է հարկաւոր...» Կուկիոյ «Թանդոյեան» և «Միրզոյեան» երկսեռ դպրոցների ուսումնական մասը կարօտ է առանձին ուշադրութեան և հոգացողութեան. նրանց մէջ սովորող մանուկների ահագին մեծամասնութիւնը մայրենի լեզուով չեն կրթվում ընտանիքում. այդտեղ մտնողները Կուկիայ և Զուղուրէթի թաղերից են. բոլորը հասարակ օտարախօս։ Այդ երկու ուսումնարաններից «Թանդոյեանը» համեմատելով միւս ծխական դպրոցների հետ ամենից ապահովն է, ունի անշարժ կալուածներ և յայտնի փողոցի վրա արդիւնաւոր կրպակներ։ «Միրզոյեան» տղայոց դպրոցը նոյնպէս 3 պատր. դասարաններից է կազմած, ունի քիչ թէ շատ հաստատ եկամուտ և ապագայում երևի աւելի ապահոված կը լինի։ Մնում է ցանկալ և յուսալ, որ վերոյիշեալ երկու դպրոցները ծառայեն իրանց նշանակութեանը և յաջողութեամբ կատարեն իրանց դերը այդ թաղերի մանուկների նկատմամբ, զարթեցնելով այդ կողմերի խորթացած երեխաների մէջ սէր՝ դէպի մայրենի լեզուն և ժամանակակից ուսումը։

Կ. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են, որպէս հաստատ լուր, որ պ. Մկրտիչ Սանասարեան 4,000 ֆրանկ է ուղարկել Վենեցիայի միաբանութեանը, իբրև նպաստ, որոնցից 2,000 ֆր. իբրև հրդեհից առաջացած վնասներին նպաստ, իսկ մնացած 2,000 ֆր. հայր Ալիշանին օժանդակութիւն նրա նոր աշխատութեան հրատարակման։ Զարմանում ենք, որ պ. Սանասարեան չէ խորշում կաթոլիկ հայերին օգնելուց։ Ախար կաթոլիկ հայերը, Սանասարեանի պէս մարդկանց կարծիքով, հայեր չեն։

—

«Кавказъ» լրագիրը լսել է, որ պ. Սլաւիանսկու երգեցիկ խումբը շուտով գալու է Թիֆլիս, կօնցերտներ տալու դիտաւորութեամբ։ Երգեցիկ խմբի բոլոր անդամները երգելու են հին ռուսաց աղնուականների զգեստներով հագնված։

—

Մի մասնաւոր նամակից, որ ստացանք Լօնդօնից, քաղում ենք հետևեալ հետաքրքիր տեղը։ «Հայկական խնդիրը այս րօպէիս այն աստիճան խոր կերպով զբաղեցնում է հասարակաց ուշադրութիւնը, մանաւանդ Անգլիայում, որ բազմաթիւ գրուածներ սկսեցին երևալ այդ խնդրի մասին։ Այդ խնդրի մասին գրողների թւում նշանաւոր է պ. Է. Ս. Ջ. Ֆէրմանն (E. St. J. Fairmann) անգլիացի գրող, որ բնակվել է արևելքում 25 տարի շարունակ և որ արդէն յայտնի է իր մի քանի գրուածներով արևելքի մասին։ Դա այժմ պատրաստում է մի աշխատանք յատկապէս «Հայկական խնդրի» մասին և շատ ուրախ կը լինի ստանալ տեղեկութիւններ այդ հարցի առիթով։ Մի և նոյն ժամանակ հարց կայ մտերումս կազմակերպելու Լօնդօնում մի ընկերութիւն, որ իրան նպատակ պիտի ունենայ հաւաքել և տարածել այն ամեն տեղեկութիւնները, որոնք օգտաւէտ կարող են լինել հայկական դատին և նըպաստաւոր նրա բնական, կանոնաւոր զարգացմանը։ Այդ ընկերութիւնը յոյս ունի գրաւել համայն հայերի համակրութիւնը և ընդունել նրանց բարոյական և նիւթական օգնութիւնը։ Բոլոր այն անձինք, որոնք կուզենան յարակցել պ. Ֆէրմանի հետ, կարող են դիմել նրան հետևեալ հասցէով. Londres S. W., № 25 Andalus Road, Clapham, E. St. J. Fairmann».

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԸ

—

Մենք մի քանի անգամ առիթ ունեցանք այցելելու պ. Գէորգ Բաշինջաղեանի նկարների հանդէսը, որ գտնվում է Դվորցօվայա փողոցի վրա, Սարաջևի տան 2-րդ համարում։ Իւրաքանչիւր անգամն էլ մենք այդ տեղից դուրս եկանք և զմայլված և՛ տխուր։

Բաշինջաղեանի նկարները տեսնել և չը յափշտակվել, անկարելի է։ Բաւական է մի քառորդ ժամ դիտել նրանց ուշադրութեամբ, և ահա դու երևակայութեամբ թռչում ես դէպի քո սրտին մօտիկ հայրենի երկիրը։ Թիֆլիսի բազմամարդ փողոցները, կառքերի դղրդիւնը, ամպացած փոչին, այս բոլորը չքանում են քո աչքից։ Դու կանգնած ես հայրենեաց վճիտ երկնակամարի տակ «Արարատեան դաշտի» վրա։ Առաւօտ է։ Քո առաջ տարածվում են ցորենի ոսկեփայլ արտօրանները, և վաղորդեան քաղցրաշունչ զեփիւռը, որ սուրալով անցնում է նրանց վրայով, կարծես քերում է և քո երեսը, չչնջում և քո ականջին հազար և մի տարիների տխուր և ուրախ պատմութիւնները։ Դու դարձնում ես քո երեսը դէպի աջ, և ահա քո առաջ իր հսկայական հասակով կանգնած է ծերուկ—«Արարատը», Հայաստանի դարևոր անցեալների հանդիսատես կոթողը։ Արևելքը դեռ նոր շառագունող արև ու ճառագայթները քրքմագոյն են ներկել նրա սպիտակափառ գագաթը. առաւօտեան մշուշը դեռ բռնած է նրա ստորոտը և գողանում է քո աչքից այն կանաչազարդ և լայնանիստ հովիտը, ուր բաղմած է Ինքը—բազմադարեան ծերունին։ Խոր լռութիւն թագաւորում է նրա շուրջը. մահկանացուի ոտքը չէ շօշափում այդ սրբազան վեհավայրը,.. Միայն հեռու, շատ հեռու, արտօրանների սպառուածի մօտ, մի կոճղի վրա, նստած է հայ գիւղացին, իր կոշտ ձեռքը ծնօտին յենած նա էլ քեզ պէս նայում է «Արարատի» ոսկեզօծ գագաթին. նա մտածում է, և ո՞վ գիտէ թէ ինչեր է մտածում... Չը խանգարենք նրան, դառնանք ուրիշ կողմը։

Ահա և «Անւոյ միջնաբերդը»։ Այստեղ արեգակը խոնարհում է դէպի իր մուտքը։ Նրա վերջին ճառագայթները ծիրանի գոյներով խաղում են «Միջնաբերդի» աւերակների և նրա ստորոտում բարձրացած աշտարակի վրա։ «Միջնաբերդի» ամբողջ բլրակը կարծես վառվում է մոգական կրակի մէջ։ Երևակայում ես թէ դու կանգնած ես այդ բլրակի վրա, և ամբողջ Անին իր հաստահիմ պարիսպներով բացվում է քո առաջ։ 1000-րդ թուականն է։ Անին կենդանի է։ Դու տեսնում ես նրան իր անցեալ փառաց կատարելութեան մէջ։ Տեսնում ես նրա բազմամարդ փողոցները, հոյակապ տներ, իշխանական ապարանքները և հազարաւոր եկեղեցիները, որոց սրածայր գմբէթների և ոսկեզօծ խաչերի վրա բեկբեկվում են արևի ճառագայթները։ Դու գլխովին մոռանում ես ներկան և զգերում ես անցեալի մէջ։ Դու տեսնում ես թէ ինչպէս խառնիճաղանճ ամբոխը խլրտում է այս ու այն հրապարակում, լցնում է այս ու այն փողոցը։ Դու լսում ես նրանց խուլ ձայները, կառքերի դղրդիւնը, եկեղեցիների երեկոյեան զանգահարութիւնը, որ հրաւիրում է ժողովրդին դէպի Աստուծոյ տաճարը... Քո երազը շարունակվում է։ Բոլոր տների պատուհանները հապճեպով բացվում են. տան բնակիչները կախված պատուհաններից զննում են անցնողներին. գեղեցիկ հայուհիները յառում են իրենց աչքերը երիտասարդների վրա, որոց նժոյգները կարծես նրանց տեսնելով աւելի ևս կատաղութեամբ ոտքերը տրոփում են գետնին, ծառանում են, և հազիւ ուրեմն զժգոհ խրխնջիւնով հնազանդվում երիտասարդի սանձելուն։ Հէնց այստեղ դու նկատում ես կախարդող հայացքներ, որոնք փոխադարձաբար հանդչում են ոչ անտարբեր սրտերի վրա... Այստեղ, քո յափշտակութեան մէջ, ուրիշ շատ տեսարաններ կը ներկայանային քեզ, բայց, ի հարկէ, դու չես սպասում և դառնում ես ուրիշ կողմ։

Քեզ ներկայանում է «Ախուրեան գետը», երբեմն Անւոյ ծառաստանների հաւատարիմ մատակարարը։ Մութն է։ Նոր ծագող շառագոյն լուսինը տակաւ առ տակաւ բարձրանում է երկնակամարի վրա։ Ախուրեանի դողդոջուն մակերևոյթը վառվում է լուսնի աղօտ պղնձագոյն լուսով. և նրա բիւրաւոր ալիքները մէկը միւսի ետեից կարծես հրեղէն գունդեր են գլորում դէպի յատակը։ Հետզհետէ լուսաւորվում են գետեզերքը, ժայռերը և մերձակայ դարևանդները, և գիշերային թագաւորութեան բոլոր հրապոյրները կենդանանում են քո առաջ այնքան գեղեցիկ, այնքան հրաշալի, որ հոգիդ ակամայ ապստամբվում է նկարչի վրձինի դէմ, այն միակ պակասութեան համար, որ նա զլացել է այս գեղեցիկ ամայութեան, այս անդորր միայնութեան մէջ, նկարել երկու սիրող սրտերի—մարդկային չարութեան և նախանձին զոհված երկու տարփածուների տխուր շիրիմներ...

Վերջապէս քո հայացքը գողանում է լայնատարը «Գեղամայ ծովակը»։ Գիշեր է։ Արծաթափայլ լուսինը բարձրացել է երկնակամարի վրա և սեաթոյր ամպերի միջից նայում է ծովակի վրա։ Իսկ նա հանդարտ է և միապաղաղ։ Փոքրիկ ալիքները միայն գեղածուի ծածանում են նրա լայնատարած մակերևոյթի վրա. իւրաքանչիւր ծփանք բերում է իր հետ լուսնի հազարաւոր շողեր. իւրաքանչիւր փոքրիկ կոհակ ցոլացնում է իր մէջ մի ամբողջ լուսին, և այսպէս Գեղամայ ամբողջ ծովակը ներկայացնում է մի արծաթի դաշտա-

Հոկտեմբերի 20-ին Արծրունու թատրօնում կայացաւ վրացերէն մի ներկայացում ի պատիւ ռուս երեւելի թատերագրող Ա. Օստրօվսկու: Պ. Օստրօվսկուն ընդունեցին ծափահարութիւններով, դերասանական խումբը կարդաց նրան մի ուղերձ, որից յետոյ ամբողջ թատրօնի հասարակութիւնը դարձաւ դէպի միջին լօժա, որտեղ նստած էր հեղինակը և բուռն ծափահարութիւններով ողջունեց նրան: Օստրօվսկին իր լօժայի մէջ կանգնած, ի նշան շնորհակալութեան, գլուխ էր տալիս հասարակութեանը: Հեղինակի հետ, նրա լօժայում, նստած էր և նրա եղբայր, պետական կալուածների մինիստրը: Թատրօնը կատարելապէս լի էր վրացի և հայ հասարակութեամբ:

—

«Новости» լրագրում կարդում ենք: «Նորերումս կայացաւ ռուսաց ս. սինօդի վճիռը, որ էական մեծ նշանակութիւն ունի մեր ուղղափառ-միսիօնարական գործի շահերի համար: Ս. սինօդը վճռեց ուղղափառ ժամասացութիւնը կատարել այլազգի լեզուներով այն տեղերում, որտեղերի ազգաբնակութեան մէջ գերակշռում է այլազգի տարրը: «Московскія Церковныя Вѣдомости» ամսագիրը հիմնաւորապէս ողջունում է այդ միջոցը հետեւեալ խօսքերով: «Մի ժողովրդի համար անծանօթ կամ սակաւ ծանօթ լեզուով կատարվող ժամասացութեան տխուր հետեւանքները ակնյայտնի և հասկանալի են ամենքի համար, ասում է լրագիրը: Ուղղափառ ժամասացութեան բարերար և փրկարար ազդեցութիւնը և նրա կրթողական մեծ նշանակութիւնը կորչում էր իր զօրութիւնը մեր այլազգիների համար հէնց այն պատճառով, որ դա (ժամասացութիւնը) կատարվում էր նրանց համար եկեղեցական-սլաւօնական լեզուով: Եւ յիրաւի, ինչ կարող էր դուրս բերել եկեղեցուց այլազգին, լսելով ժամերգութեան իրան անհասկանալի հնչիւնները և ընթերցմունքը այն լեզուով, որը նա չէ հասկանում և չը գիտէ: Դրանից չէ՞ կախված արդեօք մի քանի այլազգիների մէջ նկատված սառնութիւնը դէպի քրիստոնէական տաճարը, եկեղեցին կիրակի ու տօն օրերին սակաւ այցելելը, որովհետեւ եկեղեցական արարողութիւնը նրանց անհասկանալի և մութն է: Արդեօք հէնց այդ չէ՞ պատճառը, որ մկրտված այլազգիներից շատերը, որպէս օրինակ, չուվաշները, չերեմիսները, թաթարները և ուրիշները ամուր պահպանում են իրանց հին հաւատը, փախչում են իրանց արգելեալ սրբազան տեղերը (կիրեմէտի), երկրպագում են այնտեղ հին աստուածներին և հեթանոսական ծէսեր են կատարում: Հին հեթանոսութիւնը ոչ թէ միայն այն պատճառով է գրաւում նրանց, որ դա նրանց համար սեփական և մայրենի է, բայց և այն պատճառով, որ դա հասկանալի և պարզ է: Օտարազգուն դէպի քրիստոնէական տաճարը գրաւելու և մեր եկեղեցին նրան սիրել տալու համար ճիշտ այնպէս, որպէս սիրում է իր ծխական տաճարը ռուս ուղղափառ մարդը, զոհելով նրա չքեղութեան և պահպանութեան համար իր վերջին կոպէկը, պէտք է, որ բոլորը, ինչ որ կատարվում է նրա մէջ, թէ ժամերգութիւնը, թէ ընթերցմունքը և թէ հովուի քարոզութիւնը հասկանալի լինի նրան, նրա մայրենի լեզուով լինի: Եւ ամենից առաջ այդ վերջին պայմանը պէտք է կատարվի»:

—

Մենք ստացանք հետեւեալ հրաւէրը: «Պատիւ ունեմ խնդրել ձեզ, շնորհ բերել վանքի աւագ եկեղեցին սոյն հոկտեմբերի 23-ին, կիրակի, առաւօտեան 11 ժամին, ս. պատարագին ներկայ լինելու, որից յետոյ տեղի կունենայ մանկական պարտիզի բացման հանդէսը»: Հրաւէրը ստորագրված է օրիորդ Մ. Մամիկօնեանցի անունով:

—

Կ. Պօլսից մեզ գրում են, որ պ. Արամ Աչճեան դիտաւորութիւն ունենալով իգական սեռի դաստիարակութեանը կանոնաւոր ուղղութիւն տալու և և «Դպրոցասէր տիկնանց ընկերութեանը» նպաստելու, ձեռնարկել է «Ընտանիք» անունով կիսամեայ հանդէս հրատարակել, որի առաջին համարը շուտով լոյս պիտի տեսնի: Ձենք կարող համակրութեամբ չը վերաբերել դէպի պ. Աչճեանի ձեռնարկած օգտաւէտ հրատարակութիւնը: Պարոնի հասցէն է, Սիւմպիւլլիւ խան, թիւ 35, Կ. Պօլիս:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, հոկտեմբերի 16-ից մեզ գրում են հետեւեալը: «Սրանից ուղիղ մի տարի առաջ, Բօրժօմ-Ախալքալաքեան ճանապարհի վրա աւազակները յարձակվելով Երուսաղէմ գնացող տեղիս բնակիչ Մելքօն Պրճիկեանցի, նրա կնոջ ու թոռան վրա, թէ առաջինին և թէ վերջինին սպանեցին: Հանգուցեալ Մելքօն Պրճիկեանց կտակել էր տալու տեղիս հայոց ուսումնարանին 600 րուբլ և աղքատներին 300 րուբլ, որ և կանխիկ վճարվեցաւ իր ժամանակին: Բացի դրանից հանգուցեալի ժառանգները 100 րուբլ նուիրեցին եկեղեցու համար զանգակ բերել տալու համար: Այդ բոլորը անցեալ տարի տպվեցաւ «Մշակում»: Այսօր ևս ի յիշատակ հանգուցեալի մահւան տարեդարձի, նրա ժառանգները նուիրեցին տեղիս հայ ուսումնարաններին մի հարիւր րուբլ: Ըստ ուսումնարանների վարչութեան տնօրինութեան համեմատ, այսօր սուրբ պատարագին ներկայ կը լինեն ուսումնարանի աշակերտները և աշակերտուհիները, պատարագից յետոյ հոգեհանգիստ կը կատարվի և ուսուցիչներից մինը ճառ կը կարդայ: Այս այդպէս ուսումնարանը իր երախտագիտութիւնը յայտնում է դէպի հանգուցեալը: Ցաւակցելով հանգիստ մաղթելով հանգուցեալի ոսկորներին, մի և նոյն ժամանակ պարտք ենք համարում մեր խորին շնորհակալութիւնը յայտնել հանգուցեալի ժառանգներին, որոնք ամեն ջանք գործ են դնում հանգուցեալի յիշատակը անջինջ պահելու համար»:

—

Հայոց թատրօնական խումբը խնդրում է մեզ տպել հետեւեալը: Հոկտեմբերի 27-ին, հինգշաբթի օր, հայ թատրօնական խմբի ընկերութիւնը, կարգադրութեամբ Գ. Չմշկեանի, կը տայ ներկայացումն Արծրունու թատրօնում, որ բաղկացած կը լինի «Փոստային կայարանում» և «Ա. ժամանակ» կօմէդիաներից: Սկիզբն է $7^1/_2$ ժամին երեկոյեան: Տոմսակները ծախվում են նոյն իսկ թատրօնի կասսայում ամեն օր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, 11/23 հոկտեմբերի 1883

Օրուան խնդիրը եղած է այստեղ Վալի-փաշային խաբէութեամբ Խրիմեան Հայրիկին ստորագրել տըւած գիրը: Կ. Պօլսի լրագիրների այս նկատմամբ արած հրատարակութիւնները մեծ յուզում պատճառած են թէ այնտեղ և թէ այստեղ. ուստի կարժէ որ այդ մասին մի քիչ մանրամասն տեղեկութիւն տանք:

Յունիս 24-ի ժողովրդային յեղափոխութենէն յետոյ նահանգապետ փաշան կը կանչէ Հայրիկին և կը յայտնէ թէ Բ. Դուռէն մի հեռագիր ստացած է որ կը հրամայէ այդ յեղափոխութեան մասնակիցները բանտարկելով հարցաքննութեան ենթարկել և տեղեկութիւն տալ թէ ինչ կարգի մարդեր են այդ յեղափոխականներ (Կ. Պօլսի թիւրք լրագիրներ կարծիք յայտնած էին արդէն թէ ռուսական թելադրութեամբ եղած է այդ յեղափոխութիւն): Միանգամայն իր խօսքերի մէջէն կը հասկցնէ Հայրիկին թէ իր վրա ալ կասկածներ կան որ այս յեղափոխութեան գրգռիչն է, ապստամբապետ է, և այլն, բայց ինք փաշան հաւատ չընծայէր այդ լուրերին: Կը խնդրէ Հայրիկէն որ ցոյց տայ թէ ովոնք էին այն օր իր ներկայութեան այդ յեղափոխութիւն հանողներ: Հայրիկ նկատելով որ բազմաթիւ անմեղ անձեր Էրզրումի թշուառներին պէս բանտարկութեան պիտի ենթարկուին և յետոյ դանոնք բանտէն ազատել չը կրնալով, իրենց ընտանիքը էրզրումցիներին պէս յետին թշուառութեան մէջ պիտի իյնան, կը համոզէ Վալի փաշային թէ այդ տեսակ ձերբակալութիւններ նպաստաւոր չեն կառավարութեան, թէ այդ յեղափոխութիւն չափէն աւելի մեծ կարեւորութիւն կը ստանայ այդ տեսակ հալածանքներով որ խոհեմութիւն չէ և թէ յեղափոխականներն ժողովրդական դասակարգի մարդիկ էին և այլն: Արդէն նահանգապետ Հասան փաշան և զինուորական հրամանատար Մինիր փաշան իրարու հակառակ տեղեկագիրներ յղած էին Բ. Դուռը այս յեղափոխութեան նկատմամբ: Մինիր փաշան գործը չափէն աւելի մեծ ցոյց տալով, խնդրած էր որ անմիջապէս զօրագունդեր ղրկվին Վան ապստամբութիւնը զսպելու համար. իսկ Վալի փաշան որ միշտ կը համոզէ Բ. Դրան թէ իր խոր մանկ քաղաքագիտութեամբ անշարժութեան դա տապարած է Վանի հայերն, յունիս 24-ի յեղա փոխութեան շատ նուազ կարեւորութիւն տալով տեղեկագրած էր Բ. Դրան: Ուստի Խրիմեան խօսքերն իրեն նպաստաւոր գտնելով, կասէ թէ ես ալ չեմ ուզեր բանտարկել բազմաթիւ խեղճ մարդեր և ի զուր չարչարել, բայց Բ. Դրան հրա մանն այս է. միայն եթէ կը հաճիք, մեր երկուքի ստորագրութեամբ մի տեղեկագիր յղենք Բ. Դրա թէ այս յեղափոխութեան պատճառով մարդ բանտարկել խոհեմութիւն չը համարվեցաւ, թէ հա չէ չափէն աւելի մեծ կարեւորութիւն տալ գործ որ ժողովրդական յանկարծադէպ մի շարժում է Խրիմեան կը համաձայնվի ստորագրել: Տեղեկագի կը գրվի անմիջապէս և Վալի փաշան կարդալ գայն Խրիմեանի, իրեն հետ ստորագրել կը տա Խրիմեանի մտքէն չէր անցներ որ Վալի-փաշան իր կարդացածէն տարբեր գրած լինի այդ գրու թեան մէջ և անշուշտ քաղաքավարութեան հակա ռակ մի բան կը լինէր ասել փաշային թէ ես ձե կարդացածի չեմ հաւատար. պէտք է որ տամ ուրիշի կարդացունեմ ստորագրելու համար (Խրի մեան Հայրիկ թիւրքերէն կը հասկանայ, բայց թիւրքերէն կարդալ չը գիտեր): Այդ գրութեան հետեւանքն էր որ ձերբակալութիւններ չեղան բնաւ. բայց մի քանի օր յետոյ, Խրիմեան Հայրի իր ստորագրած գրութեան վրա կասկածներ կը ունե նայ այն խօսքերի պատճառով որոնք Վալի փաշ ասեր էր ծեծվող աղաներին, ուզելով զինք արդա ցանել ձերբակալութիւններ չանելուն համար: Հա րիկ կը փութայ բացատրութեան գիր գրել պա րիարքարան իր ստորագրած թուղթի նկատմամբ Մի քանի շաբաթ յետոյ, Կ. Պօլսի հայերէն լրա գիրներն կը գան Վան (այստեղ ամենէն շատ բաժնված թերթն է Մասիսը) և ամեն մար ընդ որս և Հայրիկ, զարմանքով կը կարդայ Վալի-փաշային Հայրիկի ստորագրել տալով Դուռը յղած և անկէ ալ պատճէնը պատրիարքա րան հաղորդուած գրութեան մէջ գրուած է թէ յունիս 24-ի յեղափոխութիւնը կատարողներ ժողովրդեան սրիկայ և խուժան մասն էր և 13 աղաների արդէն ստորագրած տեղեկագրի սեմաստ Վանի ժողովուրդը գոհ է կառավարու նէն, թէ հարստահարութիւն չը կայ Վանի նահան գին մէջ և այլն: Այստեղ ժողովուրդը լրագիրն այդ բան տեղեկացածին պէս, պատգամաւոր թեամբ դիմեց առաջնորդարան Հայրիկին և ցատրութիւն խնդրեց իր ստորագրած գրութեան նկատմամբ: Հայրիկ յայտնեց պատգամաւորութ թէ Վալի-փաշան զինք խաբած է և թէ ստոր գրելու համար իրեն ներկայացուցած գրութեան այնպիսի բաներ չէ կարդացած որ հրատարակ կը տեսնէ այժմ և որոց դէմ կը բողոքէ ինք: Հ րիկ նոյն ժամին հեռագրով իր բողոքը հաղոր պատրիարքարանի և խնդրեց որ լրագիրների հրատարակուի: Նոյն օր փոստով ևս գրեց պա րիարքարանին և Մասիսի խմբագրութեան

վայր: Ծովակի եզերքում երեւում են ձկնորսների խրճիթները և խաղաղանիստ գիւղի փոքրիկ տընակները—իրենց աւելի ևս փոքրիկ և լուսաւորված պատուհաններով: Ծովակի խորհրդաւոր հեռաւորութեան մէջ նշմարվում է Սեւանայ կղզին հայ հոգեւորականների հինաւուրց աքսորատեղին: Լոյսոյ և կենդանութեան նշոյլ չէ երեւում այդտեղ. Գեղամայ կղզեակը ներկայացնում է իր բընակիչների ճշգրիտ պատկերը... Բայց և այնպէս, որքան շատ յիշատակներ է զարթուցանում նա քո մէջ, պատմութեան քանի տխուր էջեր է բանում քո առաջ...

Մենք պ. Բաշինջաղեանի չորս պատկերների համար միայն խօսեցինք: Եւ բաւականանում ենք այսքանով: Նրա միւս նկարները, որպիսիք են. «Վենետիկի ծովածոցը և սուրբ Ղազարու վանքը», «Ցաղթական կամարը Այրեանից մօտ», «Ալազան գետի դաշտավայրը», «Թղթեննեայ անտառը վերջնալուսի ժամանակ», «Ալազան գետը գիշերաժամին», «Սուրբ Յովհաննիսի վանքը», «Արագած լեառը և Քասաղ գետը» և այլ տեսարանները, նոյնչափ գեղեցիկ և բնական են նկարված, որչափ առաջինները: Բայց մենք լռում ենք նրանց մասին մանրամասն խօսելուց, որովհետեւ մեր նըպատակն է, ոչ թէ ներբողներ կարդալ նկարչի վրձինին, այլ հրաւէր հայ հասարակութեանը, որ օգնէ նկարչին իր տաղանդը զարգացնելու և արհեստը կատարելագործելու:

Պ. Բաշինջաղեանը մեր մի ուրիշ նկարչի պէս հետամուտ չէ իր փառքը եւրոպական սալօններում որոնելուն: Նորան չեն հետաքրքրում, ոչ ովկիանոսը իր կոհակներով, ոչ Կօլումբոսը իր նաւաբեկութեամբ և ոչ Զուիցերիայի ծովակները իրենց ղալարաղուարճ հովիտներով: Նա իր վըրձինը նուիրել է իր հայրենեաց գեղեցիկ բնութեանը, նորա լեռներին, նորա հովիտներին և վերջապէս նորա տխուր աւերակներին: Նա կամենում է գործել իր հայրենակցաց մէջ, հայ գիւղացու աղքատիկ խրճթի մօտ... Նա կամենում է կենդանացնել «աչքից հեռացած և մտքից մոռացուած» ժողովրդեան անցեալն ու ներկան, կեանքն ու զրութիւնը. տնակն ու այգին, անդն ու անդաստանը: Բայց միջոցները նրան պակասում են: Նա կամենում է կատարելագործվել այդ բանի համար. կամենում է մշակել իր արհեստը, բայց նա հարուստ չէ, և, կարօտում է մի օգնող ձեռքի: Ի հարկէ, մեր հարուստ հայերից և ոչ մէկի վրա կարելի է վստահութեամբ մատնացոյց անել, այդ պատճառով և մենք ոչ ոքից ձրի օգնութիւն չենք խնդրում, այլ առաջարկում ենք մեր հարուստներին, արիստօկրատներին՝ գնել մի մի հատ պ. Բաշինջաղեանի նկարներից, որոնք կարող են գեղեցիկ զարդեր լինել նրանց սալօնների մէջ: Եթէ եւրոպական կահկարասեաց համար նրանք հազարներ են վատնում, բնաւ կորուստ չեն ունենայ եթէ մի քանի հարիւր րուբլ ևս վճարեն իրենց հայրենեաց գեղավայրերը պատկերացնող նկարներին և զորանով միջոց տան երիտասարդ նկարչին մի ճանապարհորդութիւն անել Եւրոպա իր ընտրած արհեստը կատարելագործելու համար:

Մենք ճանաչում ենք մեր հարուստներից մէկին, որ մի օտարազգի նկարած «Արարատին» շատ յօժարութեամբ վճարեց 500 րուբլ. թող մի ուրիշը աւելի պակաս վճարէ պ. Բաշինջաղեանի «Արարատին», որ իր բնականութեամբ, ճշգրտութեամբ և գեղեցկութեամբ գերազանցում է մեր տեսած օտարազգի նկարը: Եւ վերջապէս, միթէ մեր հարուստներից հէնց միայն մէկը չէ կարող (եթէ կամենայ) միայնակ գնել Բաշինջաղեանի բոլոր նկարները և աւելացնել նրանց իր տան ճոխութեանը: Դեռ մենք չենք խօսում այն բարոյական օգտի մասին, որ կարող են քաղել այդ պատկերներից թէ տան ընտանիքը և թէ նոցա այցելուները:

Պ. Բաշինջաղեանի նկարները չնչին ֆօտօգրաֆիական պատկերներ չեն. որոնք անուշադիր մնային. նոքա ստեղծագործութիւններ են, նոքա մաքի, ուղեղի և բուռն ոգեւորութեան ծնունդներ են: Միթէ մեր կարող դասակարգը անտարբերութեամբ պիտի նայէ նորանց, միթէ նա այնքան սիրտ չի պիտի ունենայ՝ որ իր գործով ցոյց տըւած համակրութեամբ քաջալերէ. երիտասարդի անդրանիկ քայլերը, որոնք ուղղվում են ժողովրդին ծառայելու:

Բայց եթէ մենք սխալվում ենք այսքան շատ յոյսեր կապելով մեր հայերի վրա, եթէ լրագրութեան ձայնը արձագանք չէ գտնելու մեր կարողների սրտում, (որին դեռ չենք սպասում) այն մանակ միում է մեր հեղինակներին յուսահատ բար յետ քաշվել գեղարուեստի ազնուական պարիզից, և գրիչն ու վրձինը թողել հողի ուր երեւի մի օր կը հանդիպէ նրանց՝ իր հարստութիւնները երկրի վրա թողած հայ կր սի անշունչ և ամօթապարտ դիակը...

Իսկ նրա արիստօկրատ որդին, երեւի մի օր ճոխ հիւրասենեակում թաւշեայ բազկաթոռի ընկած, կը գանգատէ իր հետ չօքօլադ օտարազգի տիկնոջը՝ որ «իր ազգի մէջ գե ւեստը մեռած է»: Ափսոս որ լուսաւորված զգայուն տիկինը պիտի բաւականանայ միայն րին ցաւակցութեամբ, և չի պիտի կարող ճշմարտութեան հասու լինելով՝ մի թուք ար իր հարուստ հիւրընկալի ճակատին...

Գր. Տ. Ցոփ.

վալի-փաշան զինք խաբած է և իր հասկցածէն շատ տարբեր բաներ ստորագրել տուած է որոց դէմ կը բողոքէ: Պատգամաւորութիւնը այս եղելութիւն յայտնեց ժողովրդին որ, թէև Խրիմեանի վրա կատարեալ հաւատք ունէր, սաստիկ վրդովուած էր իմանալով լրագիրներէն թէ ինք Հայրիկի ստորագրութեամբ սինլքոր, խուժան կոչված է և 13 աղաների սուտ վկայութիւնն հաստատուած է: Այս դարձուածները անգամ մի ևս կապացուցանեն Մշակի մէջ մեր գրածը թէ Վանի Հասան-փաշան իր խորամանկ և խարդախ միջոցներով միշտ կը յաջողի ծածկել մեր իսկական վիճակը Բ. Դրան առջև:

Վանի այս դէպքէն կրնաք իմանալ թէ ինչ արժէք ունին Տաճկահայաստանի զանազան նահանգներէ անդադար ղրկված այն հեռագիրներ որք գոհութիւն կը յայտնեն երկրին վիճակէն և պաշտօնապէս կը հրատարակուին Կ. Պոլսի հայ և թիւրք լրագիրներին մէջ: Ամեն տեղերէ ալ կամ ճնշումով կամ այսպիսի խաբէութիւններով ղրկված են:

Երկու շաբաթի չափ յառաջ այստեղ պատահած հետևեալ դէպքը ևս կը յայտնէ թէ էֆենդիները ո և է բանի համար ինչ միջոցներով ստորագրութիւն ձեռք կը բերեն ժողովուրդէն և նոյն իսկ պաշտօնական անձերէ:

Արևելեան Ռումէլիան Բուլգարիայի հետ միացնելու նպատակով մի յեղափոխական մասնաժողով կը գտնէ թիւրք կառավարութիւնը Անդրիանուպոլսի կողմեր: Մասնաժողովի անդամներն մահապարտութեան կը դատապարտէ. բայց յետոյ դեսպանների միջամտութեամբ մահուան պատիժը կը փոխվի ազատութիւնի: Այդ յեղափոխական բուլգարներէ երկուքը (մին ուսուցիչ և միսը վաճառական է եղեր. երկուքն ալ բարձրահասակ դեղեցիկ և ուժով երիտասարդներ) կը ղրկեն Կ. Պոլսէն Վան աքսոր: Ոստիկանների հսկողութեամբ մինչև Արճէշ կը բերուին առանց փախցնելու և անկէ ալ կը յանձնուին Բերկրիի կայմակամութեան Վան բերելու համար: Բերկրիէն մի ոստիկան միայն կը դնեն բուլգարներին հետ որք երբ կը հասնին Գըզըլջա հայաբնակ գիւղը (Վանէն 4 ժամի չափ հեռի, հիսիսային արևելեան կողմը), ոստիկանը կուզէ այնտեղ անցունել գիշերը և աքսորականները մի խրճթի մէջ բանտարկելով, դրան առջև պահապան կը դնէ մի հայ գիւղացի և ինք կերթայ քէֆ անել և քնանալ: Առաւօտ կը տեսնեն որ բուլգարներն փախած են տանէքէն. շատ կը փընտռեն, չեն կրնար գտնել: Ոստիկանը կը վերադառնայ Բերկրի և կասէ թէ հայեր փախուցին բուլգարներին: Բերկրիի կայմակամը զօրքերով կը գայ կը պաշարէ Գըզըլջա գիւղը և խեղճ հայ գիւղացիներին ծեծելով, գլխիվայր կախելով և զանազան անտանելի տանջանքներ տալով բռնի ստորագրութիւն կառնէ գիւղի տանուտերէն և գլխաւորներէն թէ գիւղին մէջ եղող այս ինչ այն ինչ հայեր փախուցին բուլգարներին: Այդ խեղճ գիւղացի հայեր բերած բանտարկած են այժմ Վան իբր գործակից բուլգար յեղափոխականների: Բանտարկուածների մէջ է նաև Արջակ գիւղի հայ մուդիրը (գիւղախմբապետ) որ այն գիշեր Գըզըլջա կը գտնուէր: Անգլիական դեր—հիւպատոս Պ. Էյրըս և մեր առաջնորդարանը միջնորդեցին Հասան-փաշայի մօտ, Գըզըլջացիների անմեղութիւնը ցոյց տալով նոցա ազատութիւնը խնդրելու համար. բայց օգուտ չունեցաւ: Թշուառները բանտին մէջ ողորմելի վիճակի ենթարկված կը հեծեն դեռ... Պ. Էյրըս շատ դեղծումների դէմ բողոքած է և այժմ յուսահատ կերևի, որովհետև Հասան-փաշան բնաւ արժէք չը տար այդպիսի բողոքների: Մի քանի շաբաթ յառաջ, թիւրքեր հայերի եկեղեցիների դուներն գիշերայն աղբով ծեփելէ յետոյ, բողոքականների ժողովարանին ալ նոյն բան արին: Պ. Էյրըս բողոքեց. բայց ինչ հետևանք ունեցաւ.—ոչինչ:

Երկու շաբաթի չափ յառաջ, հաղարաւոր ստորագրութիւններով ծածկված մի հանրագիր մատուցին հայեր Պ. Էյրըսին: Այդ գրութեամբ իրենց անտանելի վիճակ նկարագրելով կը յայտնեն թէ յուսահատական միջոցներու դիմել պիտի ստիպվին եթէ դարման չը տարուի: Պ. Էյրըս անմիջապէս այդ հանրագիր յղելով անգլիական կառավարութեան, նրա ուշադրութիւն հրաւիրեց Արմենիայի վիճակին վրա:

Խրիմեան Հայրիկ դեռ Վան է. պատրիարքարանի հրամանին համեմատ մի քանի գործերի կարգադրութեամբն զբաղված է: Հաւանօրէն ձմեռը կանցունէ Մուշ և գարունին կերթայ Կ. Պոլիս: Ձեզ յայտնի Պողոս եպիսկոպոս Լիմ անապատէն կը գայ այսօր Վան առաջնորդական տեղապահի պաշտօն վարելու:

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tagblatt» լրագիրը հաղորդում է այն խօսակցութեան բովանդակութիւնը, որ ունէր այդ լրագրի թղթակիցը Մուխտար—փաշայի հետ վիէննայում: Սուլթանի դեսպանը, ի միջի այլոց, ասեց. «Ցայտնի է, որ Բերլինի դաշնագիրը պարտաւորեց մեզ վերանորոգութիւններ մտցնել Հայաստանում: Բայց մեզ պատահած առաջին դժուարութիւնը այն էր, որ անհնար է որոշել, թէ ինչ է Հայաստանը: Թիւրքաց կայսրութեան մէջ այդ անունով ոչ մի նահանգ չը կայ. բացի դրանից, շատ դժուար կը լինէր գտնել մինչև անգամ Հայաստանի սահմանը այն դրութեամբ, որպէս նա որոշված է Բերլինի կոնգրէսից, որովհետև հին սահմանը յաճախ փոփոխվում էր: Թիւրքաց Հայաստանում մահմետականները թուով աւելի շատ են ուրիշ ազգութիւններից, այսինքն յոյներից և ուրիշներից: Իսկապէս հայերը այնտեղ ազգաբնակութեան չորրորդ մասն են կազմում, այն ինչ թիւրքերը բոլոր ազգաբնակութեան կէսն են կազմում: Բայց օրէնքները ամենի համար միատեսակ պարտաւորեցուցիչ են: Այժմ կամենում են մեր վզին փաթաթել Հայաստանի համար վերանորոգութիւնները. բայց ինչու միայն Հայաստանի համար: Ինձ համար դեռ հասկանալի կը լինի, եթէ մեր բարեացակամ խորհրդատուները առաջարկէին մեզ ռէֆօրմներ մտցնել բոլոր նահանգներում և ես կարող եմ նրանց հաւատացնել, որ սուլթանը մշտապէս աշխատում է դրա նման ռէֆօրմների մշակելով, մանաւանդ վարչութեան շրջանում: Բայց սուլթանի բոլոր խորհրդականները յայտնում են, որ կորստաբեր և անձնասպանական մի միջոց կը լիներ միայն մէկ նահանգում ռէֆօրմներ մտցնելու փորձը: Ես երկու անգամ գեներալ-նահանգապետ էի Հայաստանում և ամեն կերպ աշխատում էի բարօրութիւններ մտցնել այնտեղ: Բայց, ընդհանրապէս, այնտեղի գործերի դրութիւնը ես տանելի և աւելի լաւ գտայ քան ուրիշ տեղերում. բոլոր դատաւորները կատարեալ ազատութիւն են վայելում: Բոլոր լեզուները և ազգութիւնները ներկայացուցիչներ ունեն վարչութեան մէջ: Թիւրքաց Հայաստանում քրիստոնեաները և թիւրքերը իրանք են մշակում իրանց հողը: Աղքատութիւնը և հարստութիւնը միատեսակ են բաժանված նրանց մէջ: Գանգատներ են լսվում միայն ապահովութեան բացակայութեան վրա փողոցներում և վարչութեան մի քանի պակասութիւնների վրա: Բայց նայեցէք մի քանի եւրօպական պետութիւնների վրա, այն տեղերումն ևս, մինչև երկաթուղիների անցկացնելը, նկատվում էր նոյնպիսի անապահովութիւն: Հէնց որ կը բացվեն երկաթուղիները, գործերի դրութիւնը կը բարւոքվի և կառավարութիւնը կարող կը լինի հալածել աւազակներին և դուրս անել նրանց:» Ներկայ ժամանակում, Հայաստանում առանձին յուզմունք է նկատվում. բայց Մուխտար—փաշան խօսակցութեան մէջ դժուարանում էր բացատրել դրա պատճառը: «Ես համարձակ կարող եմ ասել, որ ոչ ոքի համար հայերի և, առհասարակ բոլոր հպատակների շահերը այնպէս թանգ չեն, որպէս սուլթանի համար: Նա անդադար ուսումնասիրում է ռէֆօրմներ. բայց, ամենից առաջ, նա պէտք է ի նկատի ունենայ ֆինանսները, որոնք շուտով, որպէս պէտք է յուսալ, շատ կը բարւոքվեն:»

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 10-ին (22-ին), Լոնդոնում, մի միտինգ կայացաւ ամենքին յայտնի բարեգործ Սեր Մոզէս Մոնտէֆիօրէի ծննդեան ինսունլինն տարեդարձը տօնելու համար, որին «Daily News» լրագիրը այդ առիթով նուիրում է մի երկար և խիստ համակրական յօդուած: «Սեր Մոզէս, ասում է այդ լրագիրը, ապրեց արդէն աւելի շատ տարիներ, քան թէ նրա ցեղի արքայական բանաստեղծը նշանակեց մարդկային կեանքի որոշեալ չափը և շատ պատճառներ կան կարծելու, որ նրա երկար կեանքը հոգսեր և վշտեր չէ պատճառել նրան: Ծնվելով 1784 թվին, Մոզէս Մոնտէֆիօրէ տեսաւ մարդկութեան պատմութեան մէջ կատարված փոփոխութիւններից ամենամեծը: Նա տեսաւ ֆրանսիական յեղափոխութիւնը, ազատութիւնը և եղբայրութիւնը, Բոնապարտի քաջագործութիւնները, տեսաւ Եւրօպայի հպատակութիւնը այն ժամանակվայ ազատ, հաւասար և եղբայր ֆրանսիացիներին: Նա տեսաւ նոր դարաշրջան, որը պէտք է յաջորդէր ֆրանսիական յեղափոխութեանը, և նա վկայ էր գոլորշիի և էլէկտրականութեան զարգացմանը, որոնք «ոչնչացնում են ժամանակը և տարածութիւնը»: Բայց մարդկութիւնը արդեօք աւելի բաղդաւոր դարձաւ հրաշքների այս դարում և չնորհիւ այդ արագ փոփոխութիւնների քաղաքականութեան և գիտութեան մէջ: Որպիսի էլ որ լինի այդ հարցի պատասխանը, սակայն անկասկած է, որ ամեն տեսակ թշուառութիւն և աղէտ աւելի արագ կերպով անցնում են մեր հայացքների առաջ: Երբ մենք մտածում ենք մեր ժամանակի բիւրաւոր թշուառութիւնների մասին՝ սովի, ժանտախտի, երկրաշարժների, պատերազմի, աղքատութեան ամենատաստիկ թշուառութիւնների մասին, մենք համարեա պատրաստ ենք ասել, որ նոր աշխարհը (աշխարհը, որ սկսվել է այն ժամանակ, երբ Մոզէս Մոնտէֆիօրէ մանուկ էր) լաւ չէ հնից: Պէտք է յիշեցնել, որ հին աշխարհը հաղիւ թէ զգում էր իր սեփական վշտերը: Մասամբ նա (աշխարհը) անտարբեր էր, մասամբ ոգիտութեան էր դատապարտված: Հարուստ և ազնուական մարդիկ ու կանայք սակաւ անգամ կամ երբէք չէին այցելում աղքատութեան մռայլ խորշերը: Այժմ, այնու ամենայնիւ, կայ գոնէ հարուստ մարդկանց մէկ պրօցէնտ, որոնք սեփական աչքերով աշխատում են համոզվել, թէ որպէս են ապրում աղքատները: Ճիշտ նոյնպէս մինչև ներկայ դարի կէսը աշխարհը դանդաղ և անճիշդ կերպով էր ստանում նորութիւնները: Միայն ներքին, ընտանեկան ցաւեր հասնում էին ֆրանսիացիների և անգլիացիների ականջին: Այն ժամանակ կարելի էր թերահաւատութեամբ վերաբերվել Լիսաբօնում պատահած երկրաշարժին: Իսկ այժմ իսկոյն և եթ իմանում ենք ամբողջ աշխարհիս վրա պատահած թշուառութիւնների մասին: Եւ որովհետև մենք աւելի հետաքրքրված ենք, այդ պատճառով աւելի ևս պակաս սառնասիրտ ենք, քան նախկին ժամանակներում, և որովհետև աշխարհի թշուառութիւնների մասին տեղեկութիւնները աւելի շուտ են հասնում մեզ քան առաջ, մենք պատրաստ ենք կարծել, որ մեր դարը աւելի դժբաղդ է, աւելի կարիք ունի, քան վաղուց անցած դարերը: Պատկերը, որը մենք փորձեցինք նկարել շատ կարելի է անաջող է: Այնու ամենայնիւ, նոյն պայմանները, որոնք ստիպում են մեզ գիտնալ և զգալ մեր, մինչև անգամ ամենահեռաւոր հարևանների թշուառութիւնները, յառաջ են կոչում Մոզէս Մոնտէֆիօրէի բարութեան և մեծահոգութեան նման առաքինութիւններ: Եւ ոչ միայն Անգլիան (ուր ամեն բարի գործ կապված է նրա անուան հետ), բայց և ամենահեռաւոր երկիրները բարերարված են եղել նրա մեծահոգութիւնից: Կարող են ասել, որ մէկ մարդու հարստութիւնը անզօր է, երբ մտածում ես աշխարհիս վրա տիրապետող թշուառութիւնների մասին: Բայց երբ մենք մտաբերենք այն անձնաւորութիւններին, որոնք փրկված են եղել յուսահատութիւնից կամ ճնշումից, և մտածենք, թէ նրանցից որքան շատերը իրանց բախտաւոր կեանքով պարտական են սէր Մոզէս Մոնտէֆիօրէին, այն ժամանակ հարստութեան զօրութիւնը դադարում է մեզ չնչին երևալ: Ռումելիա, Ռումինիա, Իտալիա, Մարոկկո, Ռուսաստանը և այլ շատ երկրներ ծառայում են որպէս ապաստարան այն բազմաթիւ մարդկանց համար, որոնց կեանքը նորոգված է նրա եռանդով և կարեկցութեամբ: Սեր Մոզէս Մոնտեֆիօրէի նման մարդկանց գործունէութեան եղանակը ապացուցանում է, թէ որպէս անհեթեթ և որքան խիստ է այն քաղաքականութիւնը, որ հալածում է հրէաներին: Ամբողջ Եւրօպան այս կամ այն ժամանակ հալածում էր հրէաներին: Նրանք աքսորված եղել են Անգլիայից, որպէս և Սպանիայից: Բայց կարծեմ, հասարակական կողմից աւելի առաջ են գնում այն ժողովուրդները, որոնք ամենից վաղ հասկացան, թէ հրէան, երբ նրա հետ լաւ են վարվում, շատ լաւ քաղաքացի է: Ուր նա հալածանքի է ենթարկված, այնտեղ նա ստիպված է աւելի ստոր գործերով պարապել, և այն ժամանակ, ինքն իրան հասկանալի է, որ նրա վարկն էլ վայր է ընկնում: Սլավոնական մի քանի երկրներում հրէաները գինեսներ են պահում և վաշխառուներ են: Երբ արբեցութիւնը և պարտքերը գիւղացի-սեփականատէրին հասցնում են մնանկութեան, նրա երկրացիները վրդովվում են, ջարդում և կողոպտում են հրէաներին: Ցայտնի չէ դեռ, թէ արդեօք անգլիական վաշխառուները աւելի սիրելի են խիստ արբեցող և պարտքերից մնանկացող մարդկանց: Բայց այդ դէպքերում կրօնական և ցեղական զանազանութիւնը զգալի չէ: Այնտեղ, ուր գինեվաճառը կամ վաշխառուն հրէաներն են, չէ կարելի նրանցից անչահասիրութիւն պահանջել: Որպէս պարիսներ արհամարհված լինելով, նրանք միջոց չունեն բարոյապէս բարձրանալ, մինչև անգամ հակումն չունեն սիրել դէպի իրանց թշնամաբար վերաբերվող հայրենակիցներին: Ֆրանսիայում և Անգլիայում հրէան հաւասար իրաւունքներ ունեցող քաղաքացի է և ոչինչ թշնամութիւն չէ զրգռում իր պարապմունքով: Նա հարստացնում է գիտութիւնը, երաժշտութիւնը, արուեստը և գրականութիւնը և ատելութիւն չէ զգում դէպի իրան չրջապատող քրիստոնեաները, և առիթ չունի այդպիսի թշնամութեան համար.. Գերմանիայում նրա դրութիւնը աւելի վատ է, և այդ պատճառով այնտեղ վնասվում են թէ նրա բնաւորութիւնը և թէ նրա հարստութիւնները: Հրէաները առողջ և լրացուցիչ տարր են ամեն երկրի ազգաբնակութեան համար, որը մոռացել է դէպի նրանց ունեցած թշնամութիւնը: Ուր այդ թշնամութիւնը պահպանվում է, այնտեղ անտեղի է սպասել, որ հրէաները կը գերանցանեն քրիստոնեաներին քրիստոնէական առաքինութիւններով:»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի: Նոյեմբերին Ս. Պետերբուրգի մէջ կը կայանայ պողպատէ րէլսների գործարանների, երկաթուղիների և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան ներկայացուցիչների ժողովը պողպատէ րէլսային գործը Ռուսաստանի մէջ բարւոքելու հարցը քննելու համար:

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ, 21 հոկտեմբերի: Երէկ հասաւ այստեղ Ծովային մինիստրութեան կառավարիչը և երեկոյեան Սեվաստոպոլ ուղևորվեցաւ:

ԼՈՆԴՈՆ, 21 հոկտեմբերի: Երէկ Դերբիում նշանաւոր անկարգութիւններ պատահեցան: Տեղական խորհրդարանի մէջ գումարված իրլանդական ազգային կուսակցութեան կողմնակիցները սկսեցին հանդիսով գնալ քաղաքի փողոցներով: Նրանք յարձակման ենթարկվեցան Անգլիայի կուսակից օրանժիստների կողմից, որոնք գրաւեցին նոյնպէս խորհրդարանի շինութիւնը: Պոլիցիան և զօրքերը վերականգնեցին հանգստութիւնը և ստիպեցին օրանժիստներին դատարկել խորհրդարանը:

ԹԱՐԿՕՎ, 21 հոկտեմբերի: Այսօր Ղրիմից Ս. Պետերբուրգ ուղևորվեցաւ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչ:

ԼԻՊԼՅԿ, 21 հոկտեմբերի: Ակցիոներների որոշման համեմատ հանքային ջրերը քաղաքին են յանձնվում:

ՕՐՈՑԵԱՆ (Կուրսկի նահանգի), 21 հոկտեմբերի: Քաղաքը միջնորդում է բանկի բացման թոյլտուութիւն ստանալու համար 10,000 ր. մայր-գումարով:

ԹԱՐԿՕՎ, 21 հոկտեմբերի: Պետական կայքերի մինիստրութիւնը մերժում է դրամական օգնութիւն հասցնել ոչխարներին վակցինան պատուաստելու փորձերին:

ՕԴԷՍՍԱ, 21 հոկտեմբերի: Բրիանսկի գործարանից Սեվաստոպոլի զրահակիրների համար հասցրած երկաթը վատութեան պատճառով չէ ընդունված և այդ պատճառով աշխատանքները դժուարացած են:

ԲԵՐԼԻՆ, 21 հոկտեմբերի: Պաշտօնապէս յայտնված է անասունների ժանտախտի դադարման մասին: Գերմանական խօլերային մասնաժողովը իր հետազօտութիւնների համար ընտրեց Կալկուտա: Դիրշաուի մէջ կալանաւորված է իրան ռուսաց դեսպան Պետրովսկի անուանող մի անձ, որ հարցափորձի ժամանակ յայտնեց, թէ ինքը ուղարկված է ռուս նիհիլիստներից Բիսմարկին սպանելու համար: Կալանաւորվածի մօտ գտնված է մօրֆիով լի մի աման:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 37 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 94 ր., հինգերորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ր. 50 կ., երկրորդ 209 ռուբլ, արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 25 կ., ոսկի 8 ր. 42 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ $23^{7}/_{16}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 200 մարկ, Փարիզի վրա 247 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԱՂԲԻՒՐ“

Լոյս տեսաւ № 10 (Հոկտեմբեր)։ Քաղաքումս բաժանվում է այսօր, կիւրակէ, իսկ օտարաքաղաքացիներինը փոստ է ձգվելու երեքշաբթի Հոկտ. 25-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դելլա (Հէքիաթ)։ Փոխ. Ն. Նեսմելով, ... Թարգ. Մ. Մամիկոնեան
Ծիծեռնակ (բանաստեղծութիւն) . . . . . Սրինդ
Լորը (Ի. Տուրգենեվից) . . . . . Թարգ. Գ. Յովհաննիսեան
Փայտաշէն խրճթից-Սպիտակ առուն (գլ.-XII—XV) . Փոխ. Ն. Տ. Աւետիքեան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օդապարիկի հնարողները (վերջ) . . . . . Մար. Փամփուխչեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Հրէաների բարեգործը

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Մանկական խաղ (Կռան-թօփի) . . . . . Արշակ
Հանելուկներ (2 հատ.)
Բեբուս. 1—3

„ՆՈՐ-ԴԱՐ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

գտնվում է ԲԱՐՕՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, № 10 տանը, Ծուրինովի դեղատան կից—փոստատան հանդէպ։ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ, առաւօտեան 9-ից մինչև 7-ը։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Редакція газеты „НОРЪ-ДАРЪ“, Тифлисъ.

3—3

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԹԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

68—100

ՍԻԳԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ա. Դ. ՏՕՊԷՐԻ

Ս. Պետերբուրգի մէջ։ Զերնիշէով պերէուլօկ, № 4։ Սիգարներ շատ լաւ յատկութեան 1 ռուբլուց մինչև 16 ռուբլ հարիւրը։ Կարելի է ընտանալ Ռուսաստանի ծխախոտների բոլոր խանութների մէջ։

1—12

Դուրս եկաւ Մամուլի տակից Վաղարշապատում տպագրված Եղնիկ քահանայ Ղնկեանցի նոր աշխատասիրութիւնը՝ „Ձայնագրեալ ազգային երգարան։“ Վաճառվում է Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։ Գինն է 80 կոպէկ։ Եւ նոյն տեղը վաճառվում են նոյն հեղինակի հետևեալ աշխատասիրութիւնները։

1. Մանկական երգարան առանց նօտաների . . . . . 20 կոպ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան . . . . . 40 կոպ.
3. Դասագիրք հայկ. Ձայնագրութեան . . . . . 30 կոպ.
4. Խմբական ձայնագրեալ երգարան . . . . . 50 կոպ.

5—10

ԲԱՑՎԱԾ Է ԴԵՂԱՏԱՆ ԲԱԺԻՆ ԽԱՐՓՈՒԽԻ ԹԱՂՈՒՄ ՇԱՅԹԱՆ ԲԱԶԱՐԻ ՎՐԱ։

3—3 (2)

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԿՈՐԱՑԱԾ ՎԻԷՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔԻ Բ. ՐԷՅԻԹԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, ՊԱՎԷՅ ՓՈՂՈՑ, № 24, առաջարկում է ամեն տեսակ կորացած կարասիք, որ գերազանցվում է ամրութեամբ, լաւ և մաքուր շէնքով և էժան է ծախվում։ Առևտրականների համար պայմանները ձեռնտու են։

2—6 (1)

ՄԻ ՏԻԿԻՆ, որ 12 տարի **ՎԱՐԺՈՒՀԻ** է եղել Հայոց ազգային ուսումնարանների մէջ, ցանկանում է տնային **ԴԱՍԵՐ** ունենալ ռուսաց և հայոց լեզուներից, նոյնպէս և բոլոր առարկաներից։ Հասցէն թողնել „Մշակի“ խմբագրատանը։

1—2 (2)

Կանանց ձմերային **ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ**, տղամարդկերանց **ԳԼԽԱՐԿՆԵՐ** և այլն ծախվում են էժան գներով։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ, ԱՐԾՐՈՒՆՈՒ գալերէա։

4—12

ՍՏԱՑՎԱԾ Է մեծ քանակութեամբ փոստային թուղթ ՐԻՊՍԻ և այլ տեսակների, ծրարներով։ Նոյնպէս և պողպատէ գրիչներ, կլէօնկա, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ սպիտակ մետալից, տուալետի ՍԱՊՕՆ, թէյ 1-ին հունձի և այլն։ Բոլորն էլ ծախվում են 25% էժան, քան թէ ուրիշ տեղ։ **Անգլիական** խանութի մէջ։ Նոյնտեղ տղամարդկերանց մի քանի հագուստներ, դրապ, տրիկո և այլն մեծ զիջումով։

9—10

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։

Միակ գործակա **ԼԻԱԿԱՆ Խ** տեղը կան ամեն ի համար մեծ **ԳՐԻՉՆԵՐ** էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔ, ներ, զմուռ, ՄԱ րիչներ, պենալ, ներ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, ս ներ, ԲԱԶԿԱԹՈՌ- բարկու կախելու ՏԻՆԵՐ, անոտներ, բրիտանական մետալից իրեր, ՆԱՊՏ ՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, Ջրամանն երես լուանալու ամաններ, Ֆիլտրա, կրա շվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտ գլխի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մ կենտաշներ։ Բժշկական թուղթ վատերկլո տի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

65—100

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Զ Ի Ն Գ Ե Ր

ՆԻՒ-ԻՕՐԿԻ ՄԷՋ



ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ։

Ծախում է ամենալաւ համարված կարեմեքենաներ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահպանում են փչանալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թեթև ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու։ Ծախվում է

ԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱՒԵԼԻ ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ։

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Զինգերի կարէմեքենաների համար։

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին զմայլեցնում են և այդ պատճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Զինգերի իսկական կարեմեքենաների տեղ։ Զգուշացնում եմ ձեզ, որ Զինգերի իսկական իւրաքանչիւր կարեմեքենան The Singer Manufacturing C-° ֆիրմայից ունի գործարանի դրոշմներ մեքենայի կոթի և մամուլի վրա. The Singer Manufacturing C-°,

Գ. ՆԷՑԴԼԻՆԳԵՐ, ԹԻՖԼԻՍ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

ԲԱԹՈՒՄԻ մէջ Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի։
ՔՈՒԹԱՅԻՍԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Շնէյդերի։
ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Միրզա-Աւազովի։
Իւրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Զինգերի ամենաօգտակար և իսկական կարեմեքենան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շաբաթական 1 ր. 50 կ. վճարելով առանց իսկական գինը բարձրացնելու։ Հնացած մեքենաները խանութը փոխում է։

23—50 (1)

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Октября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.